

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

### Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Արամ Սաֆարյանի, Հանլետ Հարությունյանի, Արտակ Դավթյանի, Կարինե Աճեմյանի և Ռաֆիկ Գրիգորյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ հայտնում ենք, որ՝

1) 1-ին հոդվածով նախատեսվող՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 2-րդ հոդվածի առաջարկվող խմբագրության դեպքում հակասություն կառաջանա նախագծի և օրենսգրքի 1026-րդ և 1038.1-ին հոդվածների դրույթների միջև՝ նկատի

ունենալով այն հանգամանքը, որ օրենսգրքի նշված հոդվածների համաձայն ձեռնարկատիրական գործունեությամբ կարող են զբաղվել նաև անհատ ձեռնարկատերերը և գյուղատնտեսական արտադրությամբ զբաղվող քաղաքացիները և (կամ) առևտրային կազմակերպությունները՝ ձեռնարկատիրական գործունեության համար կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա: Հաշվի առնելով նշվածը՝ անհրաժեշտ է նախագծից հանել նաև «եկամուտ ստանալու է հասկացությունը, քանի որ ֆիզիկական անձինք և անհատ ձեռնարկատերերն ստանում են եկամուտ, իսկ իրավաբանական անձինք՝ շահույթ»:

Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներկայումս շրջանառության մեջ է գտնվում օրենքների նախագծերի փաթեթ, որի համաձայն նախատեսվում է իրականացնել անհատ ձեռնարկատերերի հաշվառում, այլ ոչ թե՝ պետական գրանցում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 21-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հունիսի 26-ի N 775-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 97-Ն որոշման հավելվածի 3.9-րդ կետի համաձայն վերացվել է անհատ ձեռնարկատերերի պարտադիր գրանցման մասին պահանջը:

2) 2-րդ հոդվածի խմբագրությամբ նախատեսվող «պարբերական բնույթ կրող է հասկացության անհրաժեշտությունը չկա, քանի որ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման կամ իրավաբանական անձի պետական գրանցման պահից ինքնուրույն, իր ռիսկով շահույթ ստանալու նպատակով իրականացված նույնիսկ մեկ գործողությունը համարվում է ձեռնարկատիրական գործունեություն»:

Միաժամանակ պարզ չէ, թե որ դեպքում պետք է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից իրականացվող գործունեությունը համարվի պարբերական բնույթ կրող և որ դեպքում՝ ոչ: Կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ մեծ գումարի չափով մեկ գնորդից մեծածախ ապրանքների գնումը և գնված ապրանքները մեկ այլ գնորդին միանգամայն մեծածախ վաճառքը չի որակվելու որպես պարբերական բնույթ կրող գործունեություն, իսկ մեկից ավելի փոքր գումարի չափով կատարված նույն գործողությունները որակվելու են որպես ձեռնարկատիրական

AJV-44-05 2010-11-11

գործունեություն: Պարզ չէ նաև այն որոշակի ժամանակահատվածը, որի համար նախատեսվում է «պարբերական բնույթ կրող գործունեությունե հասկացությունը:

Նույն դիտողությունները վերաբերում են նաև «Անհատ ձեռնարկատիրոջ մասինե Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված տեսքով օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-1002-14.10.2010-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու  
մասին**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

*«Հոդված 2. Ձեռնարկատիրական գործունեություն*

Ձեռնարկատիրական է համարվում անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից պետական գրանցմամբ, ինքնուրույն, պարբերական բնույթ կրող, իր անունից եւ իր ռիսկով իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց շահույթ (եկամուտ) ստանալն է:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ  
Պ-1002՝-14.10.2010-ՊԲ-010/0

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

**«Անհատ ձեռնարկատիրոջ մասին և Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին**

**Հոդված 1.** Անհատ ձեռնարկատիրոջ մասին (3 ապրիլի 2001թ. ՀՕ-167) օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերությունը «իր ռիսկով, և բառերից հետո լրացնել «պարբերաբարե բառով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ձեռնարկատիրական գործունեությունը (գործարարությունը) տնտեսական գործունեության տարատեսակ է, որն իր մեջ ներառում է փոխկապակցված եւ հաջորդաբար կատարվող գործողություններ, որոնք ուղղված են որոշակի նպատակի հասնելուն, այն է՝ շահույթ ստանալուն: Այդ գործունեությունն իրականացվում է ինքնուրույն, որը ենթադրում է գործունեության ոլորտն ընտրելիս ձեռնարկատիրոջ անկախությունը պետական մարմիններից, հիմնարկներից եւ մասնավոր անձանցից: Ձեռնարկատիրական գործունեությունը նաեւ ռիսկային

է, որովհետեւ դրա հետեւանքով վնասներ կրելու կամ օգուտներ ստանալու հավանականությունն անորոշ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ձեռնարկատիրական գործունեությունը բնորոշում է վերը նշված երեք հատկանիշներով (հոդվ. 2), սահմանելով, որ դա ինքնուրույն, իր ռիսկով գործունեություն է, որի հիմնական նպատակը շահույթ ստանալն է: Մինչդեռ ձեռնարկատիրական գործունեությունն ունի նաեւ մեկ այլ պարտադիր հատկանիշ, որը Քաղ. օր. 2-րդ հոդվածում, ինչպես նաեւ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին օրենքի 1-ին հոդվածում բաց է թողնված: Դա այն է, որ ձեռնարկատիրական գործունեությունը պետք է կրի պարբերական բնույթ, պետք է իրականացվի պարբերաբար, հակառակ դեպքում իր սեփական ապրանքը թեկուզեւ մեկ անգամ գնման գնից բարձր գնով վաճառողը եւս կհամարվի ձեռնարկատեր (տե՛ս նաեւ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի 2007թ. թիվ 3-1161(ՏԴ) որոշումը):

Բացի այդ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար պարտադիր նախապայման է այն, որ ձեռնարկատիրոջ կարգավիճակ թե՛ «ֆիզիկական, թե՛» իրավաբանական անձիք կարող են ձեռք բերել միայն պետական գրանցման պահից: Եթե ձեռնարկատերն իր գործունեության պետական գրանցում չի իրականացնում, եւ այդ գործունեությունից պարբերաբար շահույթ է ստանում, ապա նա ենթարկվում է քաղաքացիաիրավական (Քաղ. օր. 26-րդ հոդվ.), վարչաիրավական (ՎԻՎՕ-ի 169-րդ հոդվ.) կամ քրեաիրավական (Քր. օր. 188-րդ հոդվ.) պատասխանատվության:

Մույն օրինագիծը կոչված է վերացնելու Քաղ. օր. 2-րդ եւ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին օրենքի 1-ին հոդվածի հիշյալ բացթողումները: